

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՅԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ⁶³

Միքայել Սողոմոնյան

Բանալի բառեր՝ բնական մենաշնորհ, ցանցային ենթակառուցվածքներ, մրցակցություն, արտադրանք, ծառայություն, արտադրության ծախքեր, մեթոդ, գործառույթ:

Ավանդաբար բնական մենաշնորհին են վերագրվում հանրային օգտագործման ենթակառուցվածքային ձեռնարկությունները, որոնք մատուցում են սոցիալական նշանակության ծառայություններ՝ էլեկտրոնատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում, երկաթուղային տրանսպորտ, հեռուստակոմունիկացիա և այլն: Նշված ենթակառուցվածքներն այն ցաներն են, որոնց միջոցով իրականացվում են արտադրանքի (ծառայության) մատուցում իրարից հեռու գտնվող տնտեսական գործակալների միջև, ինչպես նաև դրանք շահագործող տնտեսության այլ ճյուղերի ցանցերը:

Բնական մենաշնորհի առանձնահատկություններն են.

- տեխնոլոգիական գործընթացում բարդ ինժեներական ենթակառուցվածքների օգտագործումը,
- տեխնոլոգիական գործընթացների անընդհատությունը և հստակ հաջորդակառուցությունը,
- բնական մենաշնորհի արտադրանքի հանդեպ ցածր առանձգականությունը՝ սպառողը երկար ժամանակ չի կարող հրաժարվել բնական մենաշնորհի արտադրանքի (ծառայության) սպառումից,
- արտադրանքի (ծառայության) թերարտադրության փոխհատուցման անհնարինությունն այլ ժամանակի ավելցուկի հաշվին, քանի որ հնարավոր չէ կուտակել (պահեստավորել) այդ արտադրանքները,
- մրցակցությունը բերում է գործառույթների կրկնությանը, ինչը շատ մեծ ծախսատար է,
- բնական մենաշնորհի բարձր կապիտալատարությունը, չվերադարձվող մեծ ծախսերը և այլն:

Արդի շուկայական տնտեսության պայմաններում բնական մենաշնորհի տնտեսական բնույթը բացահայտվում է պետական-հանրային և մասնավոր-կորպորատիվ շահերի միահյուսումով, որի հավասարակշռությունը կոչված է սպահովելու պետությունը: Բնական մենաշնորհը թուլատրելի մենաշնորհ է, ինչի նպատակային կիրառությունը արդարացված է այն պայմանով, որ պետությունը հանդիսանում է դրա անհրաժեշտ տարրը: Պետությունը չի պայքարում բնական մենաշնորհի դեմ, այլ սատարում է նրան՝ հանուն հանրային շահերի բավարարման գործառնությունների իրականացմանը:

Ժամանակակից շուկայական տնտեսավարման պայմաններում առանձնացվում են միարդյունք և բազմարդյունք բնական մենաշնորհներ՝ կապված թողարկող արտադրանքի կամ մատուցվող ծառայության քանակից [1]: Միարդյունք բնական մենաշնորհին են պատկանում այնպիսի ճյուղեր, որոնք ապահովում են միատար արդյունքի թողարկում կամ մատուցում են ծառայության մեկ տեսակ, օրինակ, նավթի, գազի խողովակաշարային տեղափոխում: Բազմարդյունք բնական մենաշնորհը թողարկում է տարատեսակ արտադրանք և մատուցում տարբեր ծառայություններ: Դրանց են վերագրվում էլեկտրաէներգետիկայի և երկաթուղային տրանսպորտի ծառայությունները:

⁶³ Հոդվածն ընդունվել է 15.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել տ.գ.թ., ղոցենտ Ս. Քոչարյան

Այսպիսով, տեղի է ունենում բնական մենաշնորհի և ուղղահայաց ինտեգրված կառուցվածքի նույնականացում: Մեր կարծիքով, դա բոլորովին էլ այդպես չէ, քանի որ բնական մենաշնորհի գործունեությունը բաժանելով գործունեության տարբեր ոլորտների միջև, դրանց վերագրվում են իրենց բնույթին ոչ հարիր հատկանիշներ ու գործառնությունների կառուցակարգեր: Չկա բազմարդյունք բնական մենաշնորհ, այլ գոյություն ունի ուղղահայաց ինտեգրված կառուցվածք, որոնք միավորվում են մեկ արտադրական միասնական ցիկլի (պարբերաշրջանի) մեջ՝ փոխանցումը, բաշխումը և արտադրանքի (ծառայության) իրացումը: Արտադրանքի արտադրությունը և իրացումը տվյալ ցիկլի կառուցվածքում, ծառայության մատուցումը շուկայի այդ հատվածում պոտենցիալ մրցակիցներ են համարվում, հետևաբար՝ մենաշնորհը ներկայացվում է արտադրանքի (ծառայության) տեղափոխմամբ, ինչպես նաև օպերատորական ծառայությունների, գազապահեստային համակարգի ոլորտներում՝ որպես առանձին ծառայություններ մատուցողներ: Բնական մենաշնորհի «հասկացության» փոխարինումը «ուղղահայաց ինտեգրված կառուցվածքի» հետ տնտեսագիտության տեսանկյունից ճիշտ չէ: Անհրաժեշտ է առանձնացնել և հաշվի առնել բնական մենաշնորհի առանձնահատկությունները՝ ներկառուցված ուղղահայաց ինտեգրված շուկայի կառուցվածքում, որն ապահովում է ավարտուն վերարտադրության գործընթաց:

Համաձայն ավանդական մոտեցումների՝ մենաշնորհի տեսակը որոշվում է կոնկրետ ճյուղի արտադրության երկարաժամկետ ծախսերի բնույթով, ինչպես նաև վերադիր ծախսերի մակարդակով և միջին ու սահմանային ծախսերի հարաբերակցությամբ: Բնական մենաշնորհին են պատկանում այն ճյուղերը, որտեղ աշխատանքների ծավալի աճի պարագայում գրանցվում է միջին ծախսերի կրճատում, վերադիր ծախսերը գտնվում են բարձր մակարդակի վրա, իսկ միջին ծախսերը գերազանցում են սահմանային ծախսերին: Նման մոտեցումը ենթադրում է մրցակցային կառուցվածքով շուկաների համեմատ ծախսերի առավել փոքր մակարդակ, և, հետևաբար՝ ավելի ցածր գներ արտադրության մեծ ծավալների դեպքում, որպեսզի ի շահ հասարակությանը այն օգտագործվի պետության կողմից գների կարգավորման հիմնավորման հարցում:

1970-80-ական թվականներին «բնական մենաշնորհի» խնդիրների բացահայտումը կրեց որոշակի փոփոխություններ: Առանձին շուկաներն արդեն չէին համապատասխանում բնական մենաշնորհի չափանիշներին: Նոր տեխնոլոգիաների զարգացումը հեռուստակոմունիկացիոն և էլեկտրամատակարարման ճյուղերում խթանեց մրցակցության զարգացումը: Դեռ ավելին, քննադատություններ եղան կոմունալ ձեռնարկությունների հասցեին, որոնք օգտագործեցին «բնական մենաշնորհի» կարգավիճակը՝ իրենց վերահսկողությունը սահմանելու գործունեության միջանկյալ տեսակների վրա, որոնք այլ դեպքերում համարվում են մրցակցային:

Կախված բնական մենաշնորհի ձևակերպման բնույթից՝ կարելի է խոսել պետական կարգավորման թուլացման կամ փոփոխման մասին՝ ուղղված վաճառողին և գնորդին տրամադրվող տեղեկատվության ասիմետրիկությունից: Այստեղ կարևորվում է բնական մենաշնորհի կարգավիճակի հստակ սահմանումը:

Բնական մենաշնորհի արդի սահմանման մեթոդները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի: Առաջին խմբին են վերագրվում արտադրական գործառնություն բնորոշող տեխնոլոգիական բնութագրիչները, որոնցից մի մասի օգտագործումը նախատեսում է տնտեսում մասշտաբից: Եթե կիրառվող տեղնոլոգիան այնպիսին է, որ արտադրանքի ծավալի աճին զուգընթաց կրճատվում են երկարատև միջին և սահմանային ծախսերը, ապա մեկ ֆիրման կարող է բավարարել ամբողջ շուկայական պահանջարկը առավել բարձր արտադրողականության շնորհիվ, քան մի քանի փոքր վաճառողներ: Բնական մենաշնորհի նման բնութագրում տրվել է Վ.Բաունդլենի (1977), Վ.Շարկլիի (1982) կողմից [2]:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Երկրորդ խմբին են վերաբերվում գործառնական ծախքերի տեսության շրջանակներում մշակված մոտեցումները: Ռ.Քոուզի և Օ.Յուլյանտոնի աշխատությունում բնական մենաշնորհի վերլուծությունը համեմվում է տեխնոլոգիական գործոնների կազմակերպչականի հետ: Շուկայական տնտեսավարման պայմաններում գործարքներ են իրականացվում աշխատանքի բաժանման շնորհիվ առավելություններ ստանալու նպատակով: Դրա հետ մասին զոյություն ունեն գործարքների կազմակերպման միջոցներ, որոնցից յուրաքանչյուրը բերում է որոշակի ծախսումների, այդ թվում՝ գնային կառուցակարգերի [3]:

Մենաշնորհի պայմաններում արտադրական ծախքերի տնտեսում տեղի է ունենում նաև այն դեպքերում, երբ «մեկ տանիքի տակ են» իրականացվում տարատեսակ արտադրություններ, որն էլ բերում է միավոր արտադրանքի ինքնարժեքի կրճատման «մասշտաբի էֆեկտի» հաշվին: Տնտեսման աղբյուր կարող է հանդիսանալ մեկ ռեսուրսի միաժամանակյա օգտագործումը մի շարք արտադրական գործընթացներում, ինչը նաև լրացնում է պահանջարկը [4]:

Լրացուցիչ տնտեսում առաջանում է ձեռնարկության կառավարման կառուցվածքի կատարելագործման դեպքում, որն արտացոլվում է կառավարչական ծախսերի կրճատումով և աշխատավարձի տնտեսումով:

Բնական մենաշնորհի հաջորդ հատկանիշը կայանում է գործառնական ծախքերի ցածր մակարդակը. այսինքն՝ տնտեսական փոխհարաբերությունների հաշվին ծախքերի կրճատում: Դրանք ընդգրկում են որոշումների կայացման, պլանների մշակման, նախատեսվող գործունեության կազմակերպման, բանակցությունների վարման և այլ աշխատանքների կատարման ժամանակ, ինչպես նաև ցանկացած կորուստների, պլանների փոփոխման, գործարքների վերանայման պայմանների, ինչը թելադրում է իրավիճակների փոփոխման ազդեցության ներքո: Այն ամբողջությամբ ներառում է այնպիսի ցուցանիշներ, որոնք արտացոլում են ռեսուրսների բաշխման ու արտադրական գործունեության կազմակերպման տարբեր միջոցների համեմատական աշխատունակությունը [5]:

Աղյուսակ 1-ում բերվում են բնական մենաշնորհի ցանցային ենթակառուցվածքների տեսակներն՝ ըստ ծյուղերի:

Աղյուսակ 1
Բնական մենաշնորհի ցանցային ենթակառուցվածքների տեսակները [6]

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՅՈՒՂԵՐ	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ		
Էլեկտրամատակարարում	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր, Բաշխիչ էլեկտրական ցանցեր	Էլեկտրաէներգիայի փոխադրում, էլեկտրաէներգիայի բաշխում, էլեկտրաէներգիայի հաճախականության և լարման կարգավորում
Գազամատակարարում	խողովակաշարեր	Գազի մատակարարում արդյունահանող կազմակերպությունից սպառողներին
ԿՈՍՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ		
Ջրամատակարարում	Ջրամատակարարման խողովակներ	Ջրի մատակարարում սպառողներին
Ջրահեռացում (կոյուղի)	Ջրահեռացման խողովակներ, կոյուղու հորեր	Օգտագործված ջրի հեռացում և մաքրում


ՏՐԱՆՄՊՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ		
Ավտոճանապարհային	Ավտոճանապարհներ, ավտոկայաններ	Ավտոմեքենաներով բեռների և ուղևորների տեղափոխում
Երկաթուղային	Երկաթուղիներ, երկաթգծի կայարաններ	Գնացքներով ուղևորների և բեռների տեղափոխում
Ավիացիա	Օդանավակայաններ, օդային երթուղիներ	Ինքնաթիռներով, ուղաթիռներով ուղևորների և բեռների տեղափոխում

Բնական մենաշնորհի կարևոր հատկանիշ է հանդիսանում արտադրության ցանցային բնույթը: Լայն իմաստով «ցանց» հասկացությունն իրենից ներկայացնում է ինչ-որ անկախ համընդգրկուն սուբստանս: Ենդ իմաստով այն փոխգործողության բազայի վրա գործող օբյեկտների համալիր է (գործարնքների կնքում, համատեղ սեփականության տնօրինում, արտադրության գործընթացում հումքի, նյութերի օգտագործման, անձնակազմի կառավարման) և ոչ ֆորմալ կապերի (սոցիալ-տնտեսական հարաբերություններ) ամբողջություն: Բնական մենաշնորհի գործընթացում վեր է հանվում ցանցային էֆեկտ՝ ինչքան շատ սպառողներ են միացած ցանցին, այդքան մեծ օգուտ է ստանում այն ձեռներեցը, ով կարող է առաջինը կառուցել ցանցը:

Որպես կանոն, ենթակառուցվածքային ցանցերն իրարից հեռացված են ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ՝ արտադրանք (ծառայություն) ստեղծողները շատ հաճախ գտնվում են սպառողներից ժամանակի և տարածության մեջ բավականին անհամատեղությամբ: Ցանցերի առումով ենթակառուցվածք հասկացությունը ներառում է 3 մակարդակ: Առաջին մակարդակում իրականացվում է արտադրանքի մատակարարում, առանց որի դա անհնար է կամ տնտեսապես ոչ նպատակահարմար: Երկրորդում կազմում են ենթակառուցվածքային ցանցերի կիրառման գործառնությունները, իսկ երրորդ մակարդակն ընդգրկում է ենթակառուցվածքային շուկաները [7]:

Խոշոր ընկերությունները հանդիսանում են ցանցի առանցքը, որի շուրջը միավորվում են մեծ քանակության առավել փոքր ֆիրմաներ, որոնք իրականացնում են խոշոր ընկերության առանձին տեսակի գործունեություններ, որտեղ առաջինը հանդես է գալիս որպես զլխավոր պատվիրատու՝ զբաղեցնելով առաջատար դիրք տվյալ գործարքում: Հետևաբար՝ ցանցն աստիճանակարգային է:

Բնական մենաշնորհի տեսակներն ըստ հատկանիշների ներկայացվում է գծապատկերում:



Գծապատկեր: Բնական մենաշնորհի տեսակները

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Եթե առկա են միատար ընկերություններ հարակից արտադրություններով, ապա դա հորիզոնական ինտեգրացիա է: Այստեղ գործունեության առանձին տեսակներ (հումքի, նյութերի մատակարարում, մարքեթինգային հետազոտություններ, հաշվապահական հաշվետվության կազմում, հետվաճառքյա սպասարկում և այլն) կարող են փոխանցվել մասնագիտացված ֆիրմաների: Այդ կարգի ընկերությունները չի կարելի համարել բնական մենաշնորհ:

Նշանակում է բնական մենաշնորհի գոյության անհրաժեշտ պայման հանդիսանում է ոչ թե հորիզոնական, այլ ուղղահայաց ինտեգրված բարձր մակարդակի արտադրական հզորություններով և տեխնոլոգիական կառավարման կենտրոնացված գործընթացով: Բացի դրանից, ակտիվները, որոնք ներգրավված են երկաթուղիների, կապի հեռախոսային գծերի, խողովակաշարերի ենթակառուցվածքներում, ունեն կիրառման սահմանափակ շրջանակներ և չեն կարող հեշտ վերափոխվել դեպի այլ որոլորտներ [8]:

Ըստ առաջացման բնույթի և աստիճանի՝ բնական մենաշնորհները լինում են՝

ա) բնական պայմանների (ռեսուրսների) հիման վրա ձևավորված մենաշնորհներ, որոնք ընդգրկում են նավթի, գազի, հանքային և քաղցրահամ ջրերի, թանկանոթեք մետաղների և այլն, բազայի վրա ստեղծված մենաշնորհ,

բ) տեխնոլոգիական մենաշնորհները հիմնականում համապատասխանում են ցանցային բնույթի ենթակառուցվածքներին և դրական մասշտաբին: Այստեղ դասական օրինակ են հանդիսանում երկաթուղային փոխադրումները, նավթի, գազի փոխադրումը, իսկ տարածքայինը՝ կոմունալ ծառայությունները, ջրամատակարարումը, ջրահեռացումը և այլն:

Կախված սեփականության ձևից՝ բնական մենաշնորհները լինում են՝

ա) պետական, որոնք ստեղծվում են միայն բացարձակապես պետական լիազորությունների շուկաներում և կոչված են նպաստելու պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությանը, հանրային և սոցիալական շահերի, գների կարգավորման ապահովմանը,

բ) մասնավոր կապիտալի միջոցով ստեղծված ենթակառուցվածքներ (օրինակ՝ տրանսպորտի ոլորտում),

գ) խառը սեփականության հիմքի վրա ձևավորված բնական մենաշնորհ՝ պետություն-մասնավոր հատված գործընկերությամբ (էլեկտրաէներգիայի արտադրություն):

Կախված տարածքային մասշտաբներից առանձնացվում են ֆեդարալ, տարածաշրջանային և տեղային մենաշնորհները: Այն է՝

ա) ֆեդերալ նշանակության բնական մենաշնորհներն ունեն ավելի լայն ընդգրկվածություն՝ ավիացիա, կապ, երկաթուղի, ռադիո և հեռուստատեսություն,

բ) տարածաշրջանայիններն են էլեկտրամատակարարումը, գաղամատակարարումը,

գ) տեղայինները՝ ջրամատակարարումը, ջրահեռացումը, կոմունալ ծառայությունները և այլն:

Կախված գնային վարքագծից բնական մենաշնորհը լինում է՝

ա) կայուն գներով մենաշնորհ, երբ առկա է թեկուզև մեկ կայուն գնով վեկտոր, որի պայմաններում մենաշնորհը ստանում է նորմալ կամ գրոյական շահույթ,

բ) անկայուն գնային մենաշնորհի պարագայում բոլոր գներն ու սակագները պարբերաբար փոփոխության են ենթարկվում [9]:

Ջարգացած կապիտալիստական երկրներում մենաշնորհը և, հատկապես, բնական մենաշնորհը, հանդիսանում են շուկայական հարաբերությունների երկարատև զարգացման արդյունք: Նախկին սոցիալիստական երկրների, այդ թվում՝ Չայաստանի Չանրապետության համար, այդ երևույթն ընդգրկում էր վարչահրամայական տնտեսավարման բաղադրիչներ, երբ տնտեսվարող սուբյեկտների վարքագիծը, անկախ արտադրության մասշտաբից, կառավարության կողմից ենթարկվում է համակարգման, որ-

տեղ կարևոր հասկացություն է ոչ թե շուկան, այլ պակասուրդը (դեֆիցիտը) և վարչական կարգով սահմանված գները (և ոչ մի խոսք շուկայական միջավայրի ու ընդհանրապես պետական կարգավորման մասին):

Ցանկացած կառույցի, երևույթի, պաշտոնյայի, տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի էությունը կարելի է ներկայացնել դրանց կողմից կատարվող գործառույթների միջոցով: Բնական մենաշնորհը որպես առանձնահատուկ տնտեսական կատեգորիա, իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնք առաջին հերթին բաժանվում են արտադրական, համակարգ ձևավորող, ինտեգրատիվ (ամբողջացնող), կայունացնող և ազգային անվտանգություն ապահովող գործառույթների:

1. Արտադրական գործառույթը արտադրանքի թողարկումն է (ծառայության մատուցումը) մեծ տնտեսական արդյունքով, որը հանդիսանում է արտադրության համակենտրոնացման և մասնագիտացման, արտադրության կազմակերպման ցանցային բնույթի, ուղղահայաց ինտեգրման արդյունք: Հատկապես բարձր մակարդակի դրական տնտեսական արդյունքը հնարավորություն է տալիս մենաշնորհին ստանալ մրցակցային առավելություններ:

2. Համակարգ ձևավորող գործառույթ: Բնական մենաշնորհի ցանցերն իրականացնում են միասնական տնտեսական տարածքների ստեղծում և պահպանում, ինչը Հայաստանի պարագայում արդիական է, քանի որ մեր հանրապետությունը միասնական գազամուղային, էլեկտրահաղորդակցության ցանցային համակարգի մեջ է գտնվում Իրանի, Վրաստանի, վերջինիս տարածքով նաև Ռուսաստանի հետ:

3. Բնական մենաշնորհի ինտեգրատիվ (ամբողջացնող) գործառույթի միջոցով հնարավոր է դառնում ապահովել տնտեսական տարածության մեջ տնտեսական կառույցների ինտեգրացում և արտադրողական ուժերի օպտիմալ տեղաբաշխում:

4. Կայունացնող գործառույթ: Բնական մենաշնորհի սուբյեկտները ներկայացնում են մեծ քանակության աշխատատեղեր, պետական բյուջեի եկամուտ ապահովող հարկատուներ, ավելի քիչ են ենթարկվում տնտեսական ճգնաժամերի բացասական ազդեցությանը, քանի որ արտադրում են առաջին անհրաժեշտության ապրանքներ (ծառայություններ), որոնց հանդեպ միշտ էլ պահանջարկ կա, հետևաբար՝ մեղմացնում են տնտեսության անկման գործընթացը «մուլտիպլիկատորների էֆեկտի» միջոցով: Նշանակում է, որ բնական մենաշնորհի ոլորտը դիտակվում է ճգնաժամային անկումից հետո՝ որպես տնտեսական ակտիվության խթանիչ:

5. Ազգային անվտանգություն ապահովող գործառույթ: Բնական մենաշնորհի ճյուղերը և ոլորտները ապահովում են հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և ազգային եկամտի (ԱԵ) կայուն աճ, հետևաբար՝ պետության վերահսկողության կորուստը բնական մենաշնորհի գործունեության հանդեպ կնշանակի վտանգ ազգային անվտանգությանը:

Բացի ընդհանուր գործառույթներից՝ բնական մենաշնորհի յուրաքանչյուր ճյուղ կամ ոլորտ իր հերթին իրականացնում է տվյալ ոլորտին բնորոշ գործառույթներ: Այսպես, բնական մենաշնորհի էլեկտրաէներգիայի ոլորտն ապահովում է երկրի բնակչությանը, նյութական և ոչ նյութական ճյուղերին, սոցիալական ոլորտին անխափան էլեկտրամատակարարում: Եթե այստեղ տեղի ունենան խափանումներ և էլեկտրաէներգիայի մատակարարման կրճատումներ, ապա այն շաղթայական ռեակցիայի սկզբունքով կբերի ազգային տնտեսության գործունեության կրճատմանը՝ նախադրյալներ ստեղծելով տնտեսական ցնցումների և ճգնաժամի համար:

Գրեթե նույն, զուգե նաև մի քիչ նվազ դերակատարություն ունի գազամատակարարումը: Կոմունալ ենթակառուցվածքները կոչված են ապահովելու բնակչության սոցիալական պահանջների զգալի մասը, ինչը նշանակում է, որ դրա խաթարումն անմիջականորեն իր կնիքը կթողնի ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական զարգացման ցուցանիշների վրա: Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման

պայմաններում առավել է կարևորվում տրանսպորտի ոլորտի (ավտոմոբիլային, երկաթուղի և ավիացիա) գործառույթների հստակ կատարումը:

Բնական մենաշնորհի գրեթե բոլոր ոլորտներում նրանց գործունեությունները կարգավորվում են նաև անկախ կարգավորվող մարմինների կողմից: Համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի՝ էներգետիկայի բնագավառի (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը), ջրային ոլորտի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) և փոստային կապի, երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով) և տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (միայն սակագների մասով) բնագավառների կարգավորման գործառույթը վերապահվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին [11]:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է բնական մենաշնորհների կարգավորմանը վերաբերող որևէ դրույթ: Թեև բնական մենաշնորհի համարվող առանձին ոլորտների կարգավորման վերաբերյալ օրենքներ ընդունվել են, այդուհանդերձ, բացակայում է «Բնական մենաշնորհների մասին» ՀՀ ամբողջական օրենքը, որի շնորհիվ բնական մենաշնորհների բոլոր ոլորտները կկարգավորվեն մեկ իրավական ակտով, կտրվի բնական մենաշնորհի հասկացության ձևակերպումը, կսահմանվեն դրանում պետական քաղաքականության իրավական, սակագների հաշվարկման ու սահմանման հետ կապված հարաբերությունների կարգավորման հիմքերը և սկզբունքները [11]:

Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհների ոլորտների տնտեսվարումը պայմանավորված է կառուցվածքային, օրենսդրական, կազմակերպչական, տեխնիկական և ֆինանսական հարցերի համակարգված կարգավորմամբ: Որևէ բնագավառ առանձին չի կարող բարելավվել, եթե հարակից ճյուղերը չեն կատարելագործվում: Դա մեզանում ակնհայտորեն օգտագործվում է ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի և գազամատակարարման ոլորտներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Авдашева С.Т., Розанова Н.М., Теория организации рынков, М.: Магистр, 1998, стр. 233-237
2. Монополизм и антимонопольная политика / Барышева А.В., Сухотин Ю.В., Богачев В.Н. и др., М.: Наука, 1993.
3. Коуз Р., Фирма, рынок и право / Пер. с англ., Б.Пинаскер, М.: Темкс, 1991
4. Волинский А., Природа конкуренции и разнообразие продукции фирм: В 5-и томах, Т.5: Теория отраслевых рынков / А. Волинский, СПб.: Изд-во Экономическая школа, 2003, стр. 141-159
5. Норт Д., Институты и экономический рост: историческое введение / Д. Норт // THESIS, 1993, Вып. 2, стр. 69-91
6. Рента локальных монополий и региональное социально-экономическое развитие: исследовательский проект / Лаборатория экономического анализа // <http://www.lab.obninsk.ru/cectery/rent.php#6b.2015>
7. Кокорев В., Институциональная реформа в сфере инфраструктуры в условиях естественной монополии // Вопросы экономики, 1998, N 4, стр. 116
8. Камушкина Л.В., Об адаптационных возможностях населения в системе сетевого маркетинга / Л.В.Камушкина // Социологическое исследование, 2003, N 11, стр. 142-145

9. Белоусова Н.И., Васильева Е.М., Вопросы теории государственного регулирования и идентификации естественных монополий / Н.М.Белоусова, Е.М.Васильева, М.: Изд-во КОМКНИГА, 2006, стр. 204
10. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2004.02.04/7(306), 2-րդ հոդված
11. Տնտեսության պետական կարգավորում, Եր., ՏՆՏԵՍԱԳԵՏ, 2015, էջ 257

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բնական մենաշնորհի գործունեությունների տեսակները և առանձնահատկությունները Միքայել Սողոմոնյան

Հոդվածում բացահայտվում է բնական մենաշնորհի տարբերությունները մենաշնորհի մյուս տեսակներից՝ նշելով, որ բնական մենաձնորհը ոչ թե ձգտում է մաքսիմացնել իր շահույթի ծավալները, այլ կոչված է ապահովելու հավասարակշռություն հանրային ծառայության ապրանքների արտադրության և սպառման միջև: Բնական մենաշնորհը ստեղծվում է տնտեսության այն ոլորտներում, որտեղ շուկայի պահանջարկն ապահովում է մեկ վաճառող կամ երկրորդի առկայությունը հնարավոր չէ մատչցումը:

Աղյուսակի միջոցով բերվում են ցանցային ենթակառուցվածքների տեսակները բնական մենաշնորհի 4 ոլորտների համար (վառելիքաէներգետիկ, կոմունալ սպասարկումներ, տրանսպորտային կապ և հեռահաղորդակցություն)՝ առանձնացնելով շահագործման ճյուղերը, ենթակառուցվածքային ցանցերը և գործողությունների իրականացման ուղղությունները: Գծապատկերով ներկայացվում են բնական մենաշնորհի տեսակները՝ տալով դրանց հիմնական գործառույթները:

РЕЗЮМЕ

Виды естественных монополий и особенности их функционирования Микаэл Согомонян

Ключевые слова: естественная монополия, сетевая инфраструктура, конкуренция, продукция, услуги, производственные издержки, метод, функция.

В статье рассматриваются отличия естественных монополий от других видов монополий. Отмечается, что естественная монополия не стремится к максимализации объема своей прибыли, а призвана обеспечить равновесие между производителями и потребителями товаров (услуг). Естественные монополии создаются в тех отраслях, где спрос рынка полностью обеспечивает подхода: одна фирма или невозможно наличие второй фирмы. С помощью таблицы приводятся виды сетевой инфраструктуры в 4-ех сферах естественной монополии (топливно-энергетическая, коммунальное обеспечение, транспортная связь, телекоммуникации), выделяя эксплуатационные отрасли, инфраструктурные сети и направление деятельности. Представлены также виды естественных монополий, их основные функции.

SUMMARY

**The Kinds and the Features of the Functioning of Natural Monopolies
Mikayel Soghomonyan**

Keywords: natural monopoly, network infrastructure, competition, products, services, production costs, method, function.

The article discovers the differences between natural monopolies of other types of monopolies. It is noted that a natural monopoly does not seek to maximize the volume of its profits, but is called to ensure a balance between producers and consumers of goods (services). The natural monopolies are created in those industries where market demand fully provides an approach: one firm or the absence of a second firm. The table provides the types of network infrastructure in four spheres of natural monopoly (fuel and energy, communal provision, transport communications, telecommunications), highlighting the operational sectors, infrastructure networks and activities. Also represented are the functions of the appearance of natural monopolies, their main functions.